ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն՝ Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

Թեմա՝ Դերբայների ուսուցումը ավագ դպրոցում

Կատարող՝ Բավեյան Անուշ Ավետիսի

Ղեկավար՝ Մանկ. գիտութ. թեկնածու պրոֆ. Գայանե Խալաթյան

ԵՐԵՎԱՆ 2022

Բովանդակություն

1. Ներածություն

2. Գլուխ առաջին

3. Դերբայների հարցի շուրջ.

ա) Կախյալ դերբայների իմաստային, ձևային, ձևաբանական առանձնահատկությունների ուսուցումը:

բ) Հարակատար դերբայի երկակի դերի ուսուցման յուրահատկությունը:

գ) Խոսքիմասային փոխանցման երևույթը դերբայական ձևերից:

4. Եզրակացություն

5. Գրականության ցանկ

Ներածություն

Աշխատելով ավագ դպրոցում, հանդիպելով մի շարք դժվարությունների, առնչություն ունենալով երեխաների հետ, որոնք ուսումնասիրում են ժամանակակից հայոց լեզուն, ես եկա այն համոզման, որ դերբայների ուսուցումը մեծ դժվարություն է առաջացնում երեխաների շրջանում: Տեքստի վրա աշխատելիս նկատել եմ, երեխաները ունենում են մեծ դժվարություններ: Հաճախ նրանք չեն կարողանում տարբերակել խոսքի մասերը, տարբերակել դրանք և դրանց խոսքիմասային հատկանիշները: Բայը յուրահատուկ տեղ է գրավում խոսքի մասերի համակարգում նաև իր խոսքիմասային առանձնահատկութ - յուններով: Բայը ժամանակակից հայերենում միակ խոսքի մասն է, որ կարող է հանդես գալ և հանդես է գալիս ստորոգյալի պաշտոնով: Երեխաները հաճախ տեքստում չեն կարողանում գտնել բայը և ընդհանրապես պարբերակել բայի դիմավոր և անդեմ ձևերը: Նրանց մոտ բազմաթիվ հարցեր են առաջանում դրանց զանազանելու և տարբերակելու հարցում: Նրանք ամենից շատ դժվարանում են բացատրել <<անդեմ բայ>> հասկացությունը:

Ուսուցանելիս պետք է բացատրել, որ դերբայները նաև հոլովվում են, կան դերբայներ, որոնք հանդես են գալիս օժանդակ բայի հետ: Եվ սովորել դերբայների քերականական բոլոր հատկանիշները:

Այս բոլորի ուսումնասիրման, ներկայացման համար ես առաջարկում եմ դժվարությունների հաղթահարման հետևյալ տեխնոլոգիաները, որունք կներկայացնեմ սույն աշխատանքում:

Գլուխ 1

Դերբայները բայի անդեմ ձևերն են, որոնք ունենալով բակի իմաստ ու սեռի քերականական կարգ, ցույց են տալիս գործողություն՝ առանց եղանակի, ժամանակի, դեմքի ու թվի[1]:

Ժամանակակից հայերենն ունի ութ դերբայ, որոնցից 4-ն անկախ են չորսը՝ կախյալ:

Անկախ դերբայները ունեն ինքնուրույն շարահյուսական կիրառություն և անկախ բառային միավորներ են: Ժամանակակից հայերենի անկախ դերբայներն են՝

- Անորոշ դերբայ
- Ենթակայական դերբայ
- Համակատար դերբայ
- Հարակատար դերբայ

Կախյալ դերբայները, որ կոչվում են նաև ձևաբայեր, ինքնուրույն շարահյուսական կիրառություն չունեն և նախադասության մեջ գործածվում են միայն օժանդակ բայի ներկայի ու անցյալի ձևերի հետ: Կախյալ դերբայները գործածվելով օժանդակ բայերի հետ, նախադասության մեջ կարող են դառնալ միայն պարզ ստորոգյալ:

Ժամանակակից հայերենի կախյալ դերբայներն են՝

- Անկատար դերբայ
- Ապակատար դերբայ
- Վաղակատար դերբայ
- Ժխտական դերբայ

Սակայն այսօր մեր ուսումնասիրության կենտրոնում են գտնվում անկախ դերբայները, նրանց քերականական առանձնահատկությունները, խոսքիմասային պատկանելիութ - յունը և ոճական առանձնահատկությունները: Հարկ է նշել, որ դերբայների այն ձևերը, որոնք բայական հիմնական հատկանիշների հետ ունեն նաև ածականական կիրառություններ անվանում են ածականական դերբայներ: Հայերենում այսպիսի նշանակություն ունեն հարակատար, ենթակայական դերբայները: Օրինակ ՝ պատռած նամակ, վազող տղան:

Կարող ենք նշել նաև, որ երբեմն դերբայներ են համարվում նաև ձևաբայերը, որոնք ընդամենը բաղադրյալ հարադրական բայաձևերի բաղադրիչներ են և առանց օժանդակ բայի չեն գործածվում[2]: Մինչդեռ դերբայներն առանց օժանդակ բայի ունեն ինքնուրույն գործածություն (գրել չգիտես, քանդած օջախ, և այլն):

1. Հ. Պետրոսյան, Հայրենագիտական բառարան, Երևան 1987, էջ 180185:

2. Յու. Ավետիսյան, Հ. Զաքարյան, Ձևաբանություն Երևան 2008, էջ 82:

Անորոշ դերբայը բայի ուղիղ, չթեքված ձևն է. արտահայտում է գործողության ընդհանուր գաղափար՝ առանց նշելու կատարողը և կատարման ժամանակը՝ վազել, խաղալ: Այն կազմված է ներկայի հիմքից ու համապատասխան դերբայական մասնիկից՝ -ել, -ալ :

Իբր գործողության անուն՝ անորոշ դերբայը գործածվում է գոյականաբար և հոլովվում է, բայց միայն եզակի թվով: Հոգնակի թիվ սովորաբար չունի: Հայ քերականության մեջ նախապես անորոշ դերբայը հայտնի էր աներևույթ անունով: Անորոշ անվանումն այն ստացավ Համեմատաբար ավելի ուշ:

Արևելահայ գրական լեզվում անորոշ դերբայը հիմնականում համադրական կազմություն ունի՝ պարզ կամ բայածանցավոր հիմք + ել / ալ վերջավորություն կաղապարով: Ըստ այդ կաղապարի ել զարգանում են պարզ ու բայածանցավոր տեսակները: Մի քանի բայեր չունեն անորոշի ձև՝ եմ, կամ, ունեմ, գիտեմ:

Որոշ լեզուներում անորոշ դերբայը կարող է արտահայտել նաև ժամանակի իմաստ: Ժամանականիշ այս հատկությունն էլ հիմք է տվել այն եղանակ համարելու:

Անորոշ դերբայը հայերենում նաև գործողության կամ եղելության անուն է: Այն նոր նկարագրական հայերենում հոդառու է, կարող է հոլովվել հոդով կամ առանց հոդի:

Նախադասության մեջ հանդես է գալիս գոյականի հիմնական կիրառություններով: Հոգնակի ձև չունի, բայի բաշխական (ստացական) որոշ ձևերից (օրինակ՝ գնալներս, գնալներդ և այլն): Հետևում են ու հոլովման: Ներգոյականի իմաստ սովորաբար արտահայտվում է վերլուծական կազմությամբ (կարդալու մեջ, շարժվելու մեջ). համադրական ներգոյականի ձևերը սահմանափակ են: Գոյականի պես կարող է զուգորդվել կապերի հետ (օրինակ՝ գրելու համար, հասնելուն պես, ուտելուց հետո):

Անորոշ դերբայի գործառական հատկություններից կարևոր են հետևյալները՝

- Ձևավորում է դերբայական դարձված, որի մեջ նա սովորաբար առանցքայինանդամ է:
- Միակազմ անեմ նախադասություններում այն կարող է լինել գերադաս անդամ:
- Դիմավոր բայի հետ դառնում է ստորոգյալի մաս (օրինակ՝ ձեռք բերել, աշխատեց հիմնավորել):
- Օժանդակ բայի հետ կարող է գործառել որպես ստորոգելիական վերադիր:
- Կարող է, հնչերանգով պայմանավորված, հրամայականի ըղձական եղանակի նշանակություններում դրսևորվել:
- Հոլովական կիրառություններում սեռականի ձևը կարող է լինել որոշիչ, գործիականը՝ ձևի պարագա, ներգոյականը՝ սահմանափակման անուղղակի խնդիր:

Ուղղական վազել(ը) խաղալ(ը)

Սեռական վազելու խաղալու

Տրական վազելու(ն) խաղալու(ն)

Հայցական վազել(ը) խաղալ(ը)

Բացառական վազելուց խաղալուց

Գործիական վազելով խաղալով

Ներգոյական վազելում խաղալում (հազվադեպ)

Համակատար դերբայը, ժամանակակից հայերենի դերբայներից մեկն է: Ցույց է տալիս ստորոգյալի գործողությանը զուգընթաց կատարվող կամ համակատար գործողություն:

Արևելահայ գրական լեզվում համակատար դերբայը կազմվում է իս վերջավորության միջոցով, որն ավելանում է բայի երրորդ (անորոշի) հիմքին, օրինակ՝ հասնելիս, գրելիս, երգելիս, հավաքելիս:

Համակատար դերբայը նախադասության մեջ լինում է ժամանակի պարագա:

Համակատար դերբայը չի միանում օժանդակ բային և նրա հետ բաղադրյալ ստորոգյալ չի կազմում[3]:

Օրինակ՝ Լեռներ <u>տեսնելիս</u> նա միշտ հուզմունք էր ապրում:

Այս օրինակում համակատար դերբայով արտահայտված տեսնելիս բառը ցույց է տալիս գործողության կատարման ժամանակը, ուստի ժամանակի պարագա է: Սա նրա հիմնական կիրառությունն է:

Հարակատար դերբայը ցույց է տալիս առարկայի դրություն, վիճակ՝ որպես ավարտված գործողության հետևանք: Հարակատար դերբայը կազմվում է –ած վերջավորությամբ, օրինակ՝ գրած, կապած, ասած, ներկած, կարդացած, խաղացած, զգացած և այլն:

Ինչպես տեսնում ենք ա խոնարհման բայերը ունեն –ացած վերջավորությունը, որտեղ –աց-ը հիմքի ածանցն է: -ն, և -չ սոսկածանցները հարակատար դերբայում ընկնում են, իսկ –ան, -են, սոսկածանցների փոխարեն դրվում են –աց, -եց ինչպես գտնել-գտած, մտնել-մտած, փախչել-փախած, դիպչել-դիպած, հեռանալ-հեռացած, ծուլանալ-ծուլացած, հագենալ-հագեցած, վախենալ-վախեցած, կամենալ-կամեցած և այլն:

Իսկ պատճառական –ացն, -եցն, -ցն ածանցների փոխարեն դրվում են –ացր, -եցր, -ցր ինչպես՝ բարձրացնել-բարձրացրած, հեռացնել-հեռացրած, հանգցնել-հանգցրած, հասցնել-հասցրած և այլն:

Հարակատար դերբայը հանդես է գալիս տարբեր պաշտոններով: Ամենից շատ այն հանդիպում է որոշչի պաշտոնով: Պատասխանում է ինչպիսի՞, ո՞ր, հարցերին՝ կանգնած մարդ, տպված գիրք, հոգնած չի:

3. Լ. Եզեկյան, Ա. Սարգսյան, Թ. Սաքապետյան. Հայոց լեզու , Երևան 2015, էջ 95.

Հոլովվում է ի հոլովմամբ.

Ուղղական	հոգնած(ը)	բերած(ը)
Սեռական	հոգնածի	բերածի
Տրական	հոգնածի(ն)	բերածի(ն)
Հայցական	հոգնածի(ն)	բերածի(ը)
Բացառական	հոգնածից	բերածից
Գործիական	հոգնածով	----------
Ներգոյական	----------	բերածում

Այս դեպքում հարակատար դերբայը կարող է ունենալ գոյականի բոլոր պաշտոնները, օրինակ՝

Գնացածները վերադարձան (ենթակա):

Նա կարդաց գրվածը (ուղիղ խնդիր):

Հարակատար դերբայն արտահայտում է վիճակ, դրություն՝ շատ է մարզվել և դարձել է մարզված և ուժեղ բռնցքամարտիկ:

Այս դեպքում հարակատար դերբայն արտահայտում է կատարված – ավարտված գործողության իմաստ: Օրինակ՝ այդ մասին գրված է բոլոր գրքերում: Նման դեպքերում հարակատար դերբայը, միանալով օժանդակ բային դառնում էստորոգյալ կազմող բառ՝ ստորոգելի:

Ենթակայական դերբայը՝ անկախ դերբայներից մեկը, որ ցույց է տալիս գործող կամ եղող լինելը՝ որպես առարկայի հատկանիշ: Ենթակայական դերբայն արտահայտում է առարկան բնութագրող անավարտ կերպավիճակային հատկանիշով ընթացքայնություն, գործողություն:

Ենթակայական դերբայն ունի ող վերժավորություն, որ ավելանում է ե խոնարհման բայերի առաջին կամ անկատարի և ա խոնարհման բայերի երկրորդ կամ կատարյալի հիմքին(օրինակ՝ հավատալ-հավատացող, հեռանալ-հեռացող, մոտենալ-մոտեցող և այլն) :

Ենթակայական դերբայը բնորոշ է հայերենի բոլոր փուլերին (գրաբար, միջին հայերեն, բարբառներ, արևմտահայ և արևելահայ գրական լեզուներին):

Հայ քերականության մեջ նածկինում այն ընդունվել է որպես ընդունելության երեք ձևերից մեկը և կոչվել ընդունելության ներկա, ապա և ներկա դերբայ: Ենթակայական անունը տվել է Մ. Աբեղյանը[4]:

4. Հ. Պետրոսյան Հայրենագիտական բառարան, Երևան 1987թ. էջ 200.

Նախադասության մեջ ենթակայական դերբայը կարող է հանդես գալ որպես որոշիչ կամ ստորոգելի: Սրանք ենթակայական դերբայի հիմնական կիրառողթյոընններն են:

- Որոշիչ – Մուրեցող տղան նրա ընկերն էր:
- Ստորոգելի – Այնպես գգվող է երեկոն անափ...

Ենթակայական դերբայը կարող է հոլովվել (այն ենթարկվում է ի ընդհանրական հոլովման) ու գործածվել նաև գոյականաբար հանդես գալով գոյական հատուկ շարահյուսական պաշտոններում.

- Ենթակա – Պատվով մեռնողը փառքով է ապրում:
- Հատկացուցիչ – Կանչողի ձայնը մոտիկից էր լսվում:
- Խնդիրներ – Հաղթողին փոսի թախտի մոտ բերին:
  Բոլորը նայում են խոսողին: Հաղթողով հպարտանում են բոլորը:

Եթե անորոշ դերբայը Գործողության անվան կարգ է, ապա ենթակայական դերբայը գործողի անվան կարգ է: Սակայն ենթակայական դերբայը գործողի անվան նշանակություն արտահայտող նյուս բոլոր բառախմբերից տարբերվում է քերականորեն. ենթակայական դերբային՝ որպես բայաձևի, հատուկ է բայասեռի քերականական կարգը, որ գործողի անվան նշանակություն արտահայտող գոյականներին ու ածականներին հատուկ չէ: Օրինակ՝ փրկիչ և փրկող բառերը բառիմաստային մեծ տարբերություն չունեն, բայց դրանք քերականորեն տարբեր են, որովհետև առաջինը չի կարող կապակցվել ուղիղ խնդրի հետ, իսկ երկրորդը կարող է:

Այսպիսով ենթակայական դերբայի մեջ կա երկու գաղափար՝ գործողության գաղափար և առարկայի գաղափար:

Դերբայի ուսուցումը դաս.

Առարկա – հայոց լեզու

Դասարան – 11-րդ

Ուսուցիչ – Ա. Բավեյան

1. Դասի տիպ – նոր հաղորդման դաս.
2. Դասի նպատակը – ա) <u>իմանան</u> ժամանակակիցհայերենի դիմավոր և անդեմ բայերը:
   բ) <u>կարողանան</u> – տարբերակել անդեմ և դիմավոր բայերը, վերջավորությունները և քերականական հատկանիշները:
3. Դասի խնդիրները - ա) <u>Կրթական</u> – լեզվաճանաչողություն, հայերենի խոսքի մասերի տարբրակում, դիմավոր և անդեմ բայերի իմացություն:
   բ) <u>Դաստիարակչական</u> – յուրաքանչյուր դասից սովորողը պետք է քաղի դաստիարակչական խնդիրներ, այն է՝ երկձևությունների ուսումնասիրումը, ներկայացումը:
   գ) Ճանաչողական – սովորողը պարտավոր է ճանաչել հայերենի անդեմ բայերը՝ դերբայները՝ անորոշ, հարակատար, համակատար, ենթակայական, տարբերակի, թե ո՞ր դեպքում են դրանք գործածվում գոյականաբար և ո՞ր դեպքում են հանդես գալիս դերբայի պաշտոնում:
4. <u>Անհրաժեշտ պարագաներ</u> – դասագիրք, Ձևաբանության գրքի առկայություն, պաստառ:
5. Դասի ընթացքը.
   - <u>Խթանման փուլ</u>: Այս փուլը ուսուցիչը «Կարճ դասախոսության» մեթոդի կիրառմամբ փորձում է աշակերտներին բացատրել դերբայ հասկացությունը, տարբերակում է հայերենում առկա դերբայները, նշում դրանք և որոշակի չափով ծանոթացնում է 4 դերբայների քերականական առանձնահատկություններին: Նշում է, որ հայերենոիմ ունենք չորս դերբայ՝ անորոշ, հարակատար, համակատար, ենթակայական:
   - <u>Իմաստի ընկալման փուլ</u>: Ուսուցիչն այս փուլում հարցել է ուղղում սովորողներին.
     1. Որո՞նք են ժամանակակից հայերենի դերբայները:
     2. Ի՞նչ է ցույց տալիս անորոշ դերբայը:
     3. Որո՞նք են բայածանցները, և այլն:

     Հարցերն ուղելուց հետո դասարանը բաժանում ենք 4 խմբի: Յուրաքանչյուր խմբի հանձնարարվում է մեկ դերբայի ուսումնասիրում և ներկայացում:

     Սովորողներին տրվում ժամանակ 10ր. :

- Կշռադատման փուլ: Այս փուլում յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իրեն հանձնարարված դերբայի ուսումնասիրությունը, իսկ մյուս խմբերը ուշադիր լսում են, որպեսզի լրացումներ կատարեն:

Գնահատում – գնահատումն այս թեմայի շուրջ կատարվում է միավորային:

Տնային առաչադրանք – Որպես տնային աշխատանք հանձնարարվում է դերբայներով կազմել նախադասություններ, դրանք գործածելով տարբեր շարահյուսական պաշտոններով:

Եզրակացություն

Ուսումնասիրելով դերբայներ թեման, որը լեզվում ունի բազմաթիվ տարակարծություններ, երկձևություններ և կատարում է մեծ դեր, ևս եկա այն համոզման, որ մենք՝ ուսուցիչներս շատ հետևողական պետք է լինենք: Կարողանանք թեման ճիշտ ուսուցանել աշակերտներին: Բայց և դերբայները հայոց լեզվում ունեն հատկանշային դեր և նշանակություն:

Մեր խնդիրն է ճիշտ կազմակերպել դրանց ուսուցումը: Նրանց մոտ զարգացնել տեքստի վրա աշխատելու հմտություն և կարողություն: Նրանց մոտ ձևավորել, ամրապնդել կայուն գիտելիքներ հայոց լեզվից: Խորացնել գիտելիքները< ամրապնդել դրանք:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մ. Աբեղյան – Ժամանակակից հայոց լեզու 1965թ.
2. Հ. Պետրոսյան – Հայրենագիտական բառարան, Երևան 1987թ.
3. Լ. Եզեկյան, Ա. Սարգսյան, Թ. Սաքապետյան. - Հայոց լեզու , Երևան 2015թ.
4. Հ. Պետրոսյան - Հայրենագիտական բառարան, Երևան 1987թ.
5. Հովհաննես Բաղրամյան, Փառանձեմ Մեյթիխանյան – Հայոց լեզու, Երևան 2012թ.